«**Հաստատված է**»
նոր խմբագրությամբ

Հայաստանի բանկերի միության խորհրդի
25 հունիսի 2025թ. Խ-03/2025 որոշմամբ

Արձանագրություն 10/2025

Բաղկացած է 36 թերթից

Տպագրված է 1 օրինակից

Հայաստանի բանկերի միության
նախագահ

_____ Դ.Ազատյան

25 հունիսի 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ք.Երևան

ՆԱԽԱԲԱՆ

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը
2. Գործողության ոլորտը
3. Իրավասությունը
4. Առարկելու իրավունքից հրաժարվելը

ԲԱԺԻՆ II. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ
5. Հատուկ համակարգչային ծրագիրը
6. Արբիտրները

ԲԱԺԻՆ III. ԿՈՂՄԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՆ
7. Պահանջները կողմերի բազմակիության դեպքում
8. Պայմանագրերի բազմակիությունը
9. Արբիտրաժային վարույթների միացումը

ԲԱԺԻՆ IV. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԿԻԶԲԸ
10. Հայցի հարուցումը
11. Հայցադիմումի բովանդակությունը և ձևը
12. Հայցագնի որոշումը
13. Հայցադիմումի պատասխանը
14. Հակընդդեմ հայցը
15. Արբիտրաժային ծախսերը

ԲԱԺԻՆ V. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՔՈՒՄԸ
16. Փաստաթղթերի ներկայացման կարգը
17. Ծանուցումը և ժամկետների հաշվարկը

ԲԱԺԻՆ VI. ԱՐԲԻՏՐԱԺԻ ԿԱԶՄԸ
18. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը
19. Արբիտրների կողմից հանգամանքների բացահայտումը և բացարկը
20. Բացարկման ընթացակարգը
21. Արբիտրի իրավասությունների դադարումը
22. Արբիտրի փոխարինումը

ԲԱԺԻՆ VII. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԸ
23. Վարույթի ընդհանուր դրույթները
24. Արբիտրաժի վայրը
25. Արբիտրաժային վարույթի լեզուն
26. Գործի քննության ժամկետը
27. Գաղտնիությունը
28. Կիրառելի իրավունքը, արդարությունը
29. Կողմերի ներկայացուցչությունը

30. Երրորդ անձանց մասնակցությունը
31. Գործի նախապատրաստումը
32. Հայցի հիմքը և առարկան կամ հայցադիմումի պատասխանը լրացնելը
33. Ապացույցները
34. Գործի լսումները և փաստաթղթային վարույթը
35. Արբիտրաժային տրիբունալի կողմից նշանակված փորձագետը
36. Բանավոր լսումները
37. Բանավոր լսումների արձանագրությունը
38. Գործի վարույթը փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա
39. Գործի քննության կասեցումը և հետաձգումը
40. Հայցի ապահովման միջոցները

ԲԱԺԻՆ VIII. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ

41. Արբիտրաժի վերջնական որոշումը
42. Արբիտրաժի վճռի կայացումը
43. Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը
44. Առանձին արբիտրաժային որոշում
45. Համաձայնեցված պայմաններով վճիռ
46. Վճռի, որոշումների առաքումը
47. Վճռի ուղղումը, պարզաբանումը և լրացումը
48. Արբիտրաժի ավարտն առանց վճռի կայացման
49. Արբիտրաժի վճիռների, որոշումների պահպանումը

ԲԱԺԻՆ IX. ՎՃՌԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

50. Արբիտրաժային տրիբունալի վճռի կատարումը
51. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար դիմում ներկայացնելը
52. Դիմումին ներկայացվող պահանջները
53. Դիմումի քննությունը
54. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելը

ԲԱԺԻՆ X. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

55. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը և գործողությունը

Հավելված «Արբիտրաժային ծախսերի կարգը»

ՆԱԽԱԲԱՆ

Սույն կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) կարգավորում է «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի (այսուհետ՝ ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան) կողմից բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված գործարքներից բխող կամ դրանց հետ կապված, ինչպես նաև այլ սուբյեկտների միջև ծագած պայմանագրային կամ արտապայմանագրային հարաբերություններից բխող վեճերի լուծման գործընթացները:

ԲԱԺԻՆ Ի.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը

1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը ինքնուրույն, մշտապես գործող արբիտրաժային դատարան է, որը գործում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին, ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնադրությանը, Կանոնակարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գտնվելու վայրն է՝ քաղաք Երևան, Կորյունի փողոց 19ա շենք 6-րդ հարկ:

2. Գործողության ոլորտը

1. Եթե կողմերը պայմանավորվել են այն մասին, որ որևէ կոնկրետ իրավահարաբերության վերաբերյալ միմյանց միջև առկա վեճը, անկախ դրա պայմանագրային բնույթից, ենթակա է հանձնման ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան, ապա այդպիսի վեճը ենթակա է լուծման Կանոնակարգին համապատասխան, բացառությամբ այն փոփոխությունների, որոնց մասին կողմերը կարող են պայմանավորվել:

2. Արբիտրաժային տրիբունալը վարույթն իրականացնում է վեճը ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան հանձնելու պահին գործող Կանոնակարգով սահմանված կարգով, եթե կողմերի գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ՝ պահպանելով «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:

3. Կանոնակարգով որևէ ընթացակարգային կարգավորում սահմանված չլինելու դեպքում արբիտրաժային վարույթն իրականացվում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան ընթացակարգային կանոններով:

3. Իրավասությունը

1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան կարող են հանձնվել քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը, ինչպես նաև առևտրային բնույթ չունեցող այն վեճերը, որոնց համար օրենքով նախատեսված է վեճն արբիտրաժային կարգով լուծելու հնարավորություն:

2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան կարող է դիմել արբիտրաժային համաձայնության կողմ հանդիսացող ցանկացած անձ:

3. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը բավարարում է արբիտրաժային վարույթ սկսելու հայցվորի խնդրանքն այն դեպքում, երբ կողմերի միջև առկա է արբիտրաժային համաձայնություն՝ արդեն իսկ գոյություն ունեցող կամ առաջիկայում հնարավոր վեճը ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան հանձնելու մասին:

4. Կոնկրետ գործով ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի իրավասության վերաբերյալ հարցը լուծվում է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրների անվանացուցակից ընտրված վեճը քննող արբիտրաժային տրիբունալի (այսուհետ՝ արբիտրաժային տրիբունալ) կողմից:

Արբիտրաժային տրիբունալն իրավասու է, իսկ արբիտրաժային համաձայնությունը վիճարկելու դեպքում պարտավոր է առաջնահերթ քննել և որոշում կայացնել իր իրավասության, ներառյալ՝ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ: Այս նպատակով արբիտրաժային վերապահումը, որը պայմանագրի բաղկացուցիչ մաս է, պետք է մեկնաբանվի որպես պայմանագրի մյուս մասերից անկախ համաձայնություն: Պայմանագրի առ ոչինչ լինելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը ինքնին կամ օրենքի ուժով չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության:

5. Կոնկրետ գործով վեճի վերաբերյալ ըստ էության վճիռ կայացնելը արբիտրաժային տրիբունալի բացառիկ իրավասությունն է:

4. Առարկելու իրավունքից հրաժարվելը

1. Եթե կողմին հայտնի է, որ Կանոնակարգի որևէ դրույթ, որի կիրառումը իրենց նկատմամբ կողմերը կարող են սահմանափակել, կամ արբիտրաժային համաձայնության որևէ պահանջ չի պահպանվել, և, այդուհանդերձ, կողմը շարունակում է արբիտրաժային վարույթը՝ չհայտնելով իր առարկությունները այդպիսի չպահպանման վերաբերյալ առանց անհարկի ձգձգման, կամ այդպիսի առարկություն ներկայացնելու համար կոնկրետ ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետի ընթացքում, ապա համարվում է, որ տվյալ կողմը հրաժարվել է առարկություն ներկայացնելու իր իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ կողմը կհիմնավորի, որ առարկություն չներկայացնելն այդ հանգամանքներում եղել է հարգելի:

ԲԱԺԻՆ II.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

5. Հատուկ համակարգչային ծրագիրը

1. Հատուկ համակարգչային ծրագիրը նախատեսված է Կանոնակարգով սահմանված դեպքերում անաչառության և անկողմնակալության սկզբունքների պահպանմամբ արբիտրների անվանացուցակից պատահական ընտրության սկզբունքով արբիտր նշանակելու, ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրաժային վարույթին առնչվող և այլ անհրաժեշտ փաստաթղթաշրջանառությունն ապահովելու համար:

Հատուկ համակարգչային ծրագիրն օգտագործվում է նաև փաստաթուղթը ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է ինչպես էլեկտրոնային, այնպես էլ փաստաթղթային եղանակով:

3. Էլեկտրոնային եղանակով հատուկ համակարգչային ծրագիր մուտք գործելու համար կիրառվում է երկու եղանակ.

1) պարզեցված եղանակ՝ անուն-գաղտնաբառ (login password) ռեժիմով,

2) բարձր անվտանգության ռեժիմով՝ նույնականացման քարտի միջոցով:

4. Պարզեցված եղանակով հատուկ համակարգչային ծրագիր մուտք գործելու համար անհրաժեշտ է ունենալ անուն-գաղտնաբառ (login password), իսկ բարձր անվտանգության ռեժիմով հատուկ համակարգչային ծրագիր մուտք գործելու համար անհրաժեշտ է ունենալ card reader սարք և նույնականացման քարտ:

5. Սույն կետի 3-րդ ենթակետում նշված եղանակների բացակայության դեպքում հատուկ համակարգչային ծրագիր հնարավոր է մուտք գործել ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանում՝ նույնականացման քարտի առկայության դեպքում:

6. Էլեկտրոնային եղանակով հայցադիմումները կազմվում և ուղարկվում են վեբկայք մուտք գործելով և անհրաժեշտ տեղեկատվության լրացմամբ կամ API միջոցով՝ գործերի ավտոմատ ներբեռնմամբ:

7. Էլեկտրոնային եղանակով ներկայացված հայցադիմումները ձևական պայմանների պահպանվածության առումով ստուգվում են ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի աշխատակազմի կողմից, որից հետո ձևավորվում է արբիտրաժային տրիբունալը:

6. Արբիտրները

1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրներին ներկայացվող պահանջները սահմանվում են ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնադրությամբ:

2. Իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում արբիտրները անկողմնակալ են և անկախ: Նրանք չեն համարվում գործին մասնակցող կողմերի ներկայացուցիչներ:

3. Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Կանոնակարգով սահմանված կարգով՝ արբիտրների անվանացուցակից Կանոնակարգով նախատեսված կարգով:

ԲԱԺԻՆ III.
ԿՈՂՄԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱՆ

7. Պահանջները կողմերի բազմակիության դեպքում

1. Արբիտրաժային վարույթում կողմերի բազմակիության դեպքում ցանկացած կողմ կարող է պահանջներ ներկայացնել ցանկացած այլ կողմի դեմ պայմանով, որ այդ պահանջի հիմք հանդիսացող վեճերը ընդգրկված լինեն կողմերի միջև առկա արբիտրաժային համաձայնություն(ներում)ում:

2. Կանոնակարգի 11-րդ կետը, բացառությամբ 11-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված արբիտր նշանակելու մասին դրույթի, կիրառվում է mutatis mutandis սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջների նկատմամբ: Ընդ որում, համապատասխան հայտարարությունները պետք է բովանդակեն այն արբիտրաժային գործի համարը, որի շրջանակներում այն տրվում է:

8. Պայմանագրերի բազմակիությունը

1. Միմյանց հետ կապված պահանջները, որոնք բխում են մեկ կամ ավելի պայմանագրից, Կանոնակարգին համապատասխան կարող են քննվել մեկ արբիտրաժային վարույթի շրջանակում, անկախ այն բանից, թե այդ պահանջները ներկայացվել են մեկ, թե ավելի արբիտրաժային համաձայնությունների հիման վրա:

2. Միմյանց հետ կապված են այն պահանջները որոնք բխում են գլխավոր պայմանագրի հիման վրա կնքված պայմանագրերից կամ պահանջի հիմքում ընկած պայմանագրերի միջև առկա է փոխադարձ կապ կամ մեկ հայցում ներառված պայմանագրերի կողմերը և իրավահարաբերության ծագման հիմքերը նույնն են:

9. Արբիտրաժային վարույթների միացումը

1. Կողմի խնդրանքով ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը կարող է որոշում կայացնել ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրների վարույթներում գտնվող մեկ կամ մի քանի արբիտրաժային վարույթները մեկ վարույթում միավորելու մասին այն դեպքում երբ.

ա) կողմերը համաձայնվել են այդպիսի միավորման մասին, կամ

բ) արբիտրաժային վարույթներով բոլոր պահանջները ներկայացվել են միևնույն արբիտրաժային համաձայնության հիման վրա, կամ

գ) պահանջներն արբիտրաժային վարույթներով ներկայացվել են ավելի քան մեկ արբիտրաժային համաձայնության հիման վրա, արբիտրաժային վարույթներն իրականացվում են միևնույն կողմերի միջև, վեճերն արբիտրաժային վարույթներում ծագել են միևնույն իրավահարաբերություններից և ՀԲՄ ֆինանսական արբիտրա-

ժային դատարանը արբիտրաժային համաձայնությունները համարում է համատեղելի:

2. Միավորման մասին որոշում կայացնելիս ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը կարող է հիմք ընդունել ցանկացած հանգամանք, ինչը վերջինս գտնում է գործի համար նշանակություն ունեցող, այդ թվում՝ մեկ կամ մի քանի արբիտրաժային վարույթներով արբիտրների կազմի ձևավորված լինելը և որպես արբիտրներ միևնույն կամ տարբեր անձինք նշանակված լինելը:

3. Արբիտրաժային վարույթները միավորվում են ավելի վաղ սկսված արբիտրաժային վարույթին, եթե կողմերն այլ բան չեն պայմանավորվել:

4. Արբիտրաժային վարույթների միավորման որոշումը կայացնում է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահը:

ԲԱԺԻՆ IV.
ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԿԻԶԲԸ

10. Հայցի հարուցումը

1. Արբիտրաժային վարույթը սկսվում է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան հայց ներկայացնելով:

2. Հայցը ներկայացնելու ժամկետը համարվում է այն ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան հանձնելու օրը, Հատուկ համակարգչային ծրագրով հացը մուտք անելու օրը, իսկ հայցադիմումը փոստով ուղարկելու դեպքում՝ փոստային մարմնի դրոշմակնիքի ամսաթվի օրը:

11. Հայցադիմումի բովանդակությունը և ձևը

1. Հայցադիմումը պետք է պարունակի.

1) ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի անվանումը.

2) կողմերի և նրանց ներկայացուցիչների անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը), նրանց հաշվառման (գտնվելու վայրի) հասցեները, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), ինչպես նաև հեռախոսային և ֆաքսիմիլային կապի համարները, էլեկտրոնային փոստի հասցեները (վերջիններիս առկայության դեպքում), այդ թվում՝ կողմ հանդիսացող քաղաքացու անձնագրային տվյալները, փոստային հասցեները, իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, ծանուցման հասցեն, իսկ եթե հայցը ներկայացվել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձի կողմից՝ նաև այդ անձի անունը, ազգանունը, պաշտոնը.

3) այն փաստական հանգամանքների շարադրումը, որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

4) հայցվորի պահանջների նկարագրությունը՝ հղում կատարելով օրենքի, այլ իրավական ակտերի և պայմանագրի դրույթների վրա, որոնցով հայցվորը հիմնավորում է իր հայցապահանջը.

5) հայցապահանջը հիմնավորող ապացույցները.

6) հայցագինը, եթե հայցը ենթակա է գնահատման.

7) հայցագինը հիմնավորող հաշվարկը.

8) ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի իրավասության հիմնավորումները՝ կատարելով հղում արբիտրաժային համաձայնության վրա.

9) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

2. Հայցադիմումում կարող է նշվել նաև այն արբիտրի անունը և ազգանունը, որին նշանակել է հայցվորը, ինչպես նաև հայցվորի միջնորդությունները:

3. Հայցադիմումը ստորագրում է հայցվորը կամ նրա ներկայացուցիչը:

4. Հայցադիմումին կից ներկայացվում է.

1) արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ դրա պատշաճ ձևով վավերացված պատճենը.

2) Կանոնակարգով սահմանված կարգով հաշվարկված արբիտրաժային վճարների վճարումը հավաստող փաստաթուղթը.

3) հայցապահանջները հաստատող ապացույցները.

4) հայցվորի ներկայացուցչի լիազորագիրը:

12. Հայցագնի որոշումը

1. Հայցագինը որոշվում է.

1) դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ պահանջվող գումարի չափից.

2) հաշվեգրվող տոկոսների բռնագանձման պահանջներով՝ հաշվեգրված և բռնագանձման ենթակա տոկոսի գումարի չափից:

2. Մի քանի ինքնուրույն պահանջներով հայցերի դեպքում հայցագինը որոշվում է յուրաքանչյուր պահանջի համար առանձին՝ պահանջի գումարի չափից:

3. Հայցագնի մեջ չեն ներառվում գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերը:

4. Արբիտրաժային վճարի հաշվարկման կարգը սահմանվում է Կանոնակարգի անբաժանելի մասը համարվող «Արբիտրաժային ծախսերի կարգը» Հավելվածով:

13. Հայցադիմումի պատասխանը

1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կողմից հայցադիմումի օրինակն ուղարկվում է պատասխանողին՝ վերջինիս պարզաբանելով հայցադիմումի պատասխան ներկայացնելու և հայցադիմումին կից ներկայացված և ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանում դեպոնացված հայցադիմումին կցված փաստաթղթերին ծանոթանալու մասին:

2. Պատասխանողը հայցադիմումը ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում կարող է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան, որում նշվում են.

1) պատասխանողի տվյալները, փոստային հասցեները, ինչպես նաև հեռախոսային և ֆաքսիմիլային կապի համարները և էլեկտրոնային փոստի հասցեները (վերջիններիս առկայության դեպքում).

2) դիրքորոշում արբիտրաժային գործը ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան հանձնելու, ինչպես նաև հայցային պահանջներն ընդունելու կամ դրանց դեմ առարկելու վերաբերյալ.

3) այն փաստական հանգամանքները, որոնց վրա հիմնված է պատասխանողի դիրքորոշումը և այդ հանգամանքները հիմնավորող ապացույցները.

4) պատասխանողի դիրքորոշման հիմնավորումները նյութական իրավունքի կիրառման հաշվառմամբ.

5) հայցադիմումի պատասխանին կցվող փաստաթղթերի ցանկը:

3. Միանձնյա արբիտրաժային տրիբունալի կողմից վեճը քննվելու դեպքում հայցադիմումի պատասխանում կարող է նշվել կարծիք՝ վեճը պատահական ընտրության սկզբունքով հատուկ համակարգչային ծրագրով նշանակված արբիտրի կողմից քննելու վերաբերյալ, իսկ արբիտրների կազմով քննվելու դեպքում՝ նշում պատասխանողի(ների) կողմից նշանակված արբիտրի անվան, ազգանվան մասին կամ միջնորդություն՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրության սկզբունքով արբիտր նշանակելու մասին:

14. Հակընդդեմ հայցը

1. Պատասխանողը, հայցադիմումը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իրավասու է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան ներկայացնել հակընդդեմ հայց:

2. Հակընդդեմ հայցը կարող է ներկայացվել, եթե հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ և հակընդդեմ հայցը կարող է քննվել արբիտրաժային համաձայնության համաձայն:

3. Պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացվելու դեպքում հայցվորը հինգ աշխատանքային օրվա ընթացքում կարող է արբիտրաժային տրիբունալին ներկայացնել հակընդդեմ հայցի պատասխան:

4. Հակընդդեմ հայցի պատասխանին կից պետք է ներկայացվեն բոլոր այն ապացույցները, որոնցով հայցվորը հիմնավորում է իր առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

5. Հակընդդեմ հայցը պետք է համապատասխանի Կանոնակարգի 11-րդ, 15-րդ և 16-րդ կետերի պահանջներին:

6. Սահմանված ժամկետներում կողմերի կողմից համապատասխան դիրքորոշում չներկայացնելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ արբիտրաժային տրիբունալի կողմից արբիտրաժային վարույթը շարունակելու համար:

15. Արբիտրաժային ծախսերը

1. Արբիտրաժային ծախսերը ներառում են.

1) արբիտրաժային վճարը.

2) գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերը:

2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը, իսկ արբիտրաժային տրիբունալ ձևավորված լինելու դեպքում արբիտրաժային տրիբունալը, կարող է

արբիտրաժային վարույթի ընթացքում կայացնել որոշում՝ լրացուցիչ ծախսերը հոգալու համար հավելյալ գումարների վճարման վերաբերյալ:

3. Լրացուցիչ ծախսերը վճարում է այն կողմը, ում կատարած դատավարական գործողությունների հետևանքով առաջացել է այդ ծախսերի կատարման անհրաժեշտությունը: Արբիտրաժային լրացուցիչ դատավարական գործողությունները, որոնցով պայմանավորված է սույն կետում նշված վճարի անհրաժեշտությունը, չեն կատարվում և արբիտրաժային վարույթը շարունակվում է առանց այդ գործողությունների կատարման, մինչև դրանց համար վճարելը:

4. Արբիտրաժային ծախսերի չափը, վճարման կարգը, ծախսերի բաշխումը կողմերի միջև, ինչպես նաև արբիտրաժային վարույթի այլ ծախսերի հետ կապված հարաբերությունները սահմանվում են Կանոնակարգի անբաժանելի մասը համարվող «Արբիտրաժային ծախսերի կարգը» Հավելվածով:

ԲԱԺԻՆ V.
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՔՈՒՄԸ

16. Փաստաթղթերի ներկայացման կարգը

1. Արբիտրաժային վարույթին վերաբերող դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, հակընդդեմ հայց, հայցադիմումի պատասխան, առարկություններ, միջնորդություններ, իրավական դիրքորոշում, հաշտության համաձայնություն և այլն) և այլ գրավոր նյութերը ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան կողմերը ներկայացնում են արբիտրաժային վարույթի կողմերին համապատասխան քանակից մեկ օրինակ ավել:

2. Այն հայցերով, որոնց հայցագինը գերազանցում է հինգ միլիոն դրամը, արբիտրաժային համաձայնությունները ներկայացվում են երկու օրինակից:

3. Սույն կետի 1-ին ենթակետում նշված դատավարական փաստաթղթերը և այլ գրավոր նյութերը կողմերը կարող են ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով (պատշաճ ընթեռնելի սքանավորված)՝ ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի finarbitrage@uba.am էլեկտրոնային հասցեով:

4. Էլեկտրոնային եղանակով հատուկ համակարգչային ծրագրի միջոցով սույն ենթակետում նշված փաստաթղթերն ուղարկվում են Կանոնակարգի 5-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված եղանակներով:

5. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան հանձնվող բոլոր փաստաթղթերը ներկայացվում են հայերեն լեզվով: Արբիտրաժային տրիբունալի համաձայնությամբ փաստաթղթերը կարող են ներկայացվել նաև կողմերի համար ընդունելի այլ լեզվով: Կողմերի կողմից ստեղծված փաստաթղթերը ներկայացվում են Unicode տառատեսակներով, իսկ այդ փաստաթղթերը սքանավորված կամ տպված եղանակով ներկայացվելու դեպքում ներկայացվում է նաև դրանց word տարբերակը:

17. Ծանուցումը և ժամկետների հաշվարկը

1. Ծանուցումը, ներառյալ հաղորդակցությունը, հաղորդումը կամ առաջարկությունը, կարող է առաքվել կապի ցանկացած միջոցով, որն ապահովում է կամ հնարավորություն է տալիս հաստատել դրա ուղարկման փաստը:

2. Եթե գործում առկա է հասցե, որը հատուկ այդ նպատակով նշվել է կողմերից մեկի կողմից, ապա ցանկացած ծանուցում տվյալ անձին առաքվում է նշված հասցեով և համարվում է ստացված առաքման փաստով: Հասցեի փոփոխության դեպքում կողմերը պարտավոր են այդ մասին անմիջապես հայտնել ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանին:

Հաղորդակցության ուղարկումն այնպիսի էլեկտրոնային միջոցներով, ինչպիսիք են ֆաքսիմիլային կապը կամ էլեկտրոնային հասցեն, կարող է իրականացվել միայն այն հասցեով, որը նշված է կամ թույլատրված է այդ նպատակի համար:

3. Նշված կամ թույլատրված հասցեի բացակայության դեպքում ծանուցումը համարվում է ստացված, եթե

1) այն հասցված է անձամբ հասցեատիրոջը, կամ

2) այն հասցված է առևտրային կազմակերպության գործունեության իրականացման վայր, կամ հասցեատիրոջ մշտական բնակության վայր կամ հասցեատիրոջ փոստային հասցեով:

4. Եթե ողջամիտ հարցումներ կատարելուց հետո նշված հասցեներից ոչ մեկը չի կարող պարզվել, գրավոր հաղորդակցությունը համարվում է ստացված, եթե դա ուղարկված է հասցեատիրոջ՝ ուղարկողին հայտնի վերջին գործունեության վայր, մշտական բնակության կամ փոստային վերջին հայտնի հասցեով՝ պատվիրված նամակով կամ նշված գրավոր հաղորդակցությունն հասցնելու փորձի գրանցումն ապահովող որևէ այլ ձևով:

5. Հաղորդակցությունը համարվում է ստացված այն հասցեատիրոջը սույն կետի 2-րդ, 3-րդ կամ 4-րդ ենթակետերին համապատասխան հասցվելու օրը կամ 4-րդ ենթակետով նախատեսված հասցվելու փորձի համապատասխան օրը: Էլեկտրոնային միջոցներով փոխանցված հաղորդագրությունը համարվում է ստացված այն ուղարկելու օրը:

6. Կանոնակարգով սահմանված ժամկետների հաշվարկման համար ժամկետի հոսքը սկսվում է ծանուցումը ստանալու հաջորդ օրվանից: Եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Արբիտրաժային տրիբունալը կարող է երկարաձգել ժամկետները, եթե դա համարի արդարացված:

ԲԱԺԻՆ VI.
ԱՐԲԻՏՐԱԺԻ ԿԱԶՄԸ

18. Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը

1. Մինչև հարյուր միլիոն դրամ կամ դրան համարժեք արտարժույթային գումարի բռնագանձման պահանջներով վեճը քննող արբիտրաժային տրիբունալը

ձևավորվում է միանձնյա արբիտրի կազմով, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ:

2. Ելնելով անկողմնակալության և անաչառության սկզբունքից արբիտրաժային տրիբունալը նախագահող միանձնյա արբիտր է դառնում հատուկ համակարգչային ծրագրի միջոցով արբիտրների անվանացուցակից պատահական ընտրության սկզբունքով նշանակված արբիտրը, եթե մինչև գործն արբիտրաժային վարույթ ընդունելը հայցվորը չի նշանակել արբիտր, բացառությամբ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող գումարի բռնագանձման պահանջներով վեճերի, որի դեպքում արբիտրը ընտրվում է բացառապես հատուկ համակարգչային ծրագրի միջոցով արբիտրների անվանացուցակից պատահական ընտրության սկզբունքով:

3. Եթե հայցվորը մինչև գործն արբիտրաժային վարույթ ընդունելը նշանակել է արբիտր, ապա տվյալ արբիտրը դառնում է արբիտրաժային տրիբունալը նախագահող միանձնյա արբիտր, եթե պատասխանողը վեճը տվյալ արբիտրի կողմից միանձնյա քննելու մասին ծանուցումը պատշաճ ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում առարկություն չի ներկայացնում արբիտրաժային տրիբունալի նախագահողի թեկնածության դեմ:

Տվյալ արբիտրի՝ որպես վեճը քննող միանձնյա արբիտրաժային տրիբունալի նախագահողի, թեկնածության դեմ պատասխանողի կամ պատասխանողներից որևէ մեկի կողմից սահմանված ժամկետում առարկություններ ներկայացնելու դեպքում վեճը քննող միանձնյա արբիտր է դառնում հատուկ համակարգչային ծրագրով պատահական ընտրության սկզբունքով նշանակված արբիտրը:

4. Կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված դեպքերում՝ մինչև հարյուր միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարի բռնագանձման պահանջներով, իսկ արբիտրաժային համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում՝ հարյուր միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող գումար բռնագանձելու պահանջներով, ինչպես նաև այլ պահանջներով գործերով արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է երեք արբիտրի կազմով, որի դեպքում կողմերից յուրաքանչյուրը արբիտրների անվանացուցակից նշանակում է մեկական արբիտր, իսկ կողմերի կողմից նշանակված արբիտրները նշանակում են երրորդ արբիտրին, որն էլ դառնում է արբիտրաժային տրիբունալը նախագահողը:

Եթե կողմերը որպես արբիտր նշանակում են միևնույն անձին, ապա վեճը քննող արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է միանձնյա արբիտրի կազմով:

Կողմերը կարող են նաև դիմում (միջնորդություն) ներկայացնել, որ արբիտրը նշանակվի հատուկ համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրության սկզբունքով:

5. Սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերում, եթե պատասխանողը հայցադիմումը ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացնում արբիտրի թեկնածություն, ապա վերջինս նշանակվում է հատուկ համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրության սկզբունքով:

6. Կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված դեպքերում արբիտրաժային տրիբունալը կարող է կազմավորվել նաև երեքից ավելի արբիտրների կազմով, սակայն արբիտրների քանակը միշտ պետք է լինի կենտ: Ընդ

որում, եթե գործին մասնակցում են մի քանի հայցվորներ կամ մի քանի պատասխանողներ, ապա հայցվորների և պատասխանողների կողմից պետք է նշանակվեն հավասար թվով արբիտրներ:

7. Եթե արբիտրաժային տրիբունալը բաղկացած է մեկից ավելի արբիտրից, ապա կողմերի կողմից նշանակված արբիտրները ընտրում են վերջին արբիտրին, իսկ համաձայնության բացակայության դեպքում վերջին արբիտրը նշանակվում է հատուկ համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրության սկզբունքով:

8. Արբիտրների կազմով արբիտրաժային գործին երկու կամ ավելի հայցվորներ կամ պատասխանողներ մասնակցելու դեպքում արբիտրին նշանակում են բոլոր հայցվորները կամ բոլոր պատասխանողները համատեղ: Եթե հայցվորները կամ պատասխանողները չեն համաձայնվում արբիտրների համատեղ նշանակման հարցում, ապա նրանց փոխարեն արբիտրը նշանակվում է հատուկ համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրության սկզբունքով:

9. Արբիտրաժին աջակցող և վերահսկող դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչվելու դեպքում տվյալ գործով կրկին ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան դիմելու դեպքում, արբիտրաժային գործը Հատուկ համակարգչային ծրագրում մուտք է արվում որպես նախկին գործ և մակագրվում է նույն արբիտրաժային տրիբունալին, որն իրավասու է քննել գործը, բացառությամբ, եթե կողմերից որևէ մեկը Կանոնակարգով նախատեսված ժամկետում առարկություն է ներկայացնում արբիտրաժային տրիբունալի կազմի վերաբերյալ: Նման առարկության ստացման դեպքում գործի մակագրումը նոր արբիտրաժային տրիբունալին կատարվում է սույն կետով նախատեսված կարգով:

19. Արբիտրների կողմից հանգամանքների բացահայտումը և բացարկը

1. Որպես արբիտր հնարավոր նշանակման մասին առաջարկ ստացած կամ հատուկ համակարգչային ծրագրով նշանակված անձը պարտավոր է հայտնել ցանկացած այնպիսի հանգամանքների մասին, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ: Արբիտրը իր նշանակման պահից և արբիտրաժի ամբողջ ընթացքում՝ մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից վերջնական վճռի կայացումը կամ արբիտրաժային վարույթի որևէ այլ ձևով ավարտը, պարտավոր է կողմերին անհապաղ հայտնել ցանկացած այդպիսի հանգամանքների մասին, եթե նա ավելի վաղ տեղյակ չի եղել և չի հայտնել վերջիններիս դրանց մասին:

2. Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի բացարկ հայտնելու արբիտրին, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են հարուցում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, կամ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում:

3. Արբիտրի անգործության կամ բացարկի հիմքով իր գործառույթները իրավաբանորեն կամ փաստացի չկատարելու դեպքում կիրառվում են Կանոնակարգի 21-րդ և 22-րդ կետերով նախատեսված ընթացակարգերը:

20. Բացարկման ընթացակարգը

1. Բացարկի մասին կողմերի գրավոր դիմումները, որոնցում շարադրված են բացարկի հիմքերը, պետք է ներկայացվեն հինգ աշխատանքային օրյա ժամկետում, այն բանից հետո, երբ կողմն իմացել է արբիտրաժային տրիբունալի ձևավորման մասին, կամ այն բանից հետո, երբ կողմն իմացել է այնպիսի հանգամանքների մասին, որոնք բացարկի հիմք կարող են հանդիսանալ:

2. Բացարկի մասին դիմումը ուղարկվում է արբիտրաժային վարույթի բոլոր կողմերին, հանձնվում է բացարկվող արբիտրին և մյուս արբիտրներին՝ արբիտրների կազմով արբիտրաժային տրիբունալի դեպքում:

3. Երբ բացարկը արբիտրին հայտնել է որևէ կողմ, ապա բոլոր կողմերը կարող են համաձայնվել արբիտրի բացարկման ընթացակարգի վերաբերյալ:

4. Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում կամ մյուս կողմը չի համաձայնվում բացարկին, ապա բացարկի հարցը որոշում են արբիտրաժային տրիբունալի մյուս անդամները:

5. Եթե հայտնված բացարկը մերժվում է, ապա բացարկ հայտնած կողմը բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով: Քանի դեռ կողմի նման դիմումի վերաբերյալ որոշում ընդունված չէ, արբիտրաժային տրիբունալը, ներառյալ՝ այն արբիտրը, որին բացարկ է հայտնվել, կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել:

6. Արբիտրն իր հայեցողությամբ, եթե գտնում է, որ կան այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ կարող է նաև ինքնաբացարկ հայտնել: Արբիտրի կողմից ձևական պատճառով ինքնաբացարկ հայտնել չի թույլատրվում: Ինքնաբացարկ հայտնելու կամ սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված համաձայնությունը չի ենթադրում սույն կետով կամ Կանոնակարգի 19-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով կամ 21-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հիմքերից որևէ մեկի ընդունում:

7. Բացարկ կարող է հայտնվել նաև վարույթին մասնակցող փորձագետներին և թարգմանիչներին: Այս դեպքում բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

21. Արբիտրի իրավասությունների դադարումը

1. Այն դեպքում, երբ արբիտրն իրավաբանորեն կամ փաստացի ի վիճակի չէ կատարել կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառույթները առանց անհարկի ձգձգման, նրա լիազորությունները դադարում են՝ ինքնաբացարկ հայտնելով, կամ երբ կողմերը համաձայնվում են նրա լիազորությունների դադարեցման մասին:

2. Այլ դեպքերում, երբ առկա են տարաձայնություններ սույն կետի 1-ին ենթակետի հիմքերից որևէ մեկի վերաբերյալ, արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված դատարան:

3. Արբիտրի լիազորությունները դադարում են նաև, եթե՝

1) արբիտրը մահացել է.

2) արբիտրին անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ.

3) արբիտրի հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրն օրենքով սահմանված կարգով լուծվել է:

4. Սույն կետով նախատեսված կամ այլ հիմքերով արբիտրի լիազորությունները դադարելու դեպքում լիազորությունները դադարած արբիտրը չի կարող քննել տվյալ գործը:

22. Արբիտրի փոխարինումը

1. Եթե արբիտրի լիազորությունները դադարում են Կանոնակարգի 19-րդ կամ 21-րդ կետերով նախատեսված հիմքերով կամ որևէ այլ պատճառով ինքնաբացարկ հայտնելու կամ կողմերի համաձայնության ուժով կամ այլ հիմքերով, ապա նոր արբիտրը նշանակվում է նույն կարգով, որով նշանակվել էր փոխարինվող արբիտրը:

2. Կողմերի կողմից նշանակված արբիտրի լիազորությունները սույն կետի 1-ին ենթակետում նշված հիմքերով դադարելու և կանոնակարգով սահմանված կարգով նոր արբիտր չընտրելու դեպքում արբիտրը նշանակվում է հատուկ համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրության սկզբունքով:

3. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, երբ Կանոնակարգի 19-րդ և 21-րդ կետերին համապատասխան՝ փոխարինվում է միանձնյա արբիտրը կամ արբիտրաժային տրիբունալի նախագահողը, ապա նախկինում անցկացված բոլոր լսումները վերսկսվում են, իսկ եթե փոխարինվում է ցանկացած այլ արբիտր, ապա այդպիսի լսումները կարող են վերսկսվել արբիտրաժային տրիբունալի հայեցողությամբ:

ԲԱԺԻՆ VII.
ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԸ

23. Վարույթի ընդհանուր դրույթները

1. Արբիտրաժային վարույթն իրականացվում է կողմերի հավասարության սկզբունքի հիման վրա:

2. Կողմերը և նրանց ներկայացուցիչները պարտավոր են բարեխճորեն իրականացնել իրենց դատավարական իրավունքները, թույլ չտալ այդ իրավունքների չարաշահում և պահպանել դրանց իրականացման համար սահմանված ժամկետները:

3. Կողմերի համաձայնությամբ չկարգավորված հարցերը քննելիս արբիտրաժային տրիբունալը հետևելով «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին, ելնելով անաչառության և անկողմնակալության սկզբունքից, վարում է քննությունը այնպիսի եղանակով, որը նա գտնում է նպատակահարմար՝ պահպանելով հավասար վերաբերմունք կողմերի

նկատմամբ և հնարավորություն տալով կողմերից յուրաքանչյուրին հավասարապես պաշտպանելու իրենց շահերը: Արբիտրաժային տրիբունալը իր հայեցողությամբ վարույթն իրականացնում է խուսափելով անհարկի ձգձգումներից և ծախսերից, ապահովելով արդարացի և արդյունավետ վարույթ՝ կողմերի միջև վեճը լուծելու համար:

4. Արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել մեկ կամ մի քանի որոշումներ արբիտրաժային վարույթին մասնակցող բոլոր կողմերի վերաբերյալ:

24. Արբիտրաժի վայրը

1. Արբիտրաժի վայրն է՝ քաղաք Երևանը: Արբիտրաժի որոշումը համարվում է կայացված այն վայրում, որտեղ իրականացվել է արբիտրաժային վարույթը:

2. Կողմերը կարող են համաձայնվել լսումներն այլ վայրում անցկացնելու մասին: Անկախ լսումների կամ վճռի կայացման վայրից, արբիտրաժի վճիռը համարվում է իրավաբանորեն (de jure) կայացված Հայաստանի Հանրապետությունում:

3. Նման դեպքում լսումների վայրի տեղափոխման հետ կապված բոլոր լրացուցիչ ծախսերը կատարվում, իսկ այնուհետև բաշխվում են կողմերի միջև համամասնորեն:

25. Արբիտրաժային վարույթի լեզուն

1. Գործի արբիտրաժային վարույթն իրականացվում է հայերեն լեզվով:

2. Եթե կողմը չի տիրապետում գործի վարույթի իրականացման լեզվին, ապա արբիտրաժային տրիբունալը կողմի խնդրանքով և վերջինիս հաշվին կարող է նրան ապահովել թարգմանչական ծառայություններով:

3. Եթե որևէ փաստաթուղթ կազմված է ոչ արբիտրաժային վարույթի լեզվով և չի ներկայացվել այդ փաստաթղթի թարգմանությունը, ապա արբիտրաժային տրիբունալը կարող է կողմին պարտավորեցնել ներկայացնել փաստաթղթի թարգմանված տարբերակը:

4. Կողմի, ներկայացված փաստաթղթի թարգմանություն պահանջելու դեպքում կատարված թարգմանության ծախսը հատուցում է ոչ հայերեն լեզվով փաստաթուղթ ներկայացրած կողմը:

26. Գործի քննության ժամկետը

1. Արբիտրաժային տրիբունալը որպես կանոն գործի վարույթն ավարտում է կողմերին ծանուցելու պահից քսանօրյա ժամկետում: Նշված ժամկետ կարող է երկարացվել, եթե արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում կողմերին լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց ներկայացնելու համար ժամանակ տրամադրելու, կամ լրացուցիչ դատավարական գործողությունների կատարման դեպքում:

2. Սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետը խախտելու հետևանքով արբիտրի մոտ գործեր կուտակվելու դեպքում ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային

դատարանի նախագահի գրության հիման վրա կարող է ժամանակավորապես դադարեցվել տվյալ արբիտրի պատահական ընտրության սկզբունքով հատուկ համակարգչային ծրագրով որպես գործ քննող արբիտր նշանակվելը:

27. Գաղտնիությունը

1. Եթե օրենքով կամ դատարանի որոշմամբ այլ բան նախատեսված չէ, կամ եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա բոլոր արբիտրաժային վարույթները գաղտնի են և դռնփակ, և ոչ մի փաստաթուղթ կամ ներկայացված այլ ապացույց կամ արբիտրաժի ժամանակ երբևէ կատարված հայտարարություն չի կարող տրամադրվել այլ անձանց կամ որևէ դատարանի կամ այլ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկությունները տրամադրվում են դատարանի որոշմամբ կամ անհրաժեշտ են դատարանում վարույթի շրջանակներում՝ արբիտրաժի վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ հայտարարման համար:

2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրները, ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահը և աշխատողները, փորձագետն ու թարգմանիչը պարտավոր են չհրապարակել ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանին հանձնված վեճերի մասին իրենց հայտնի դարձած որևէ տեղեկություն, որոնց հրապարակումը կարող է վնաս հասցնել կողմերի օրինական շահերին:

28. Կիրառելի իրավունքը, արդարությունը

1. Արբիտրաժային տրիբունալը վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը: Ցանկացած պետության իրավունքին կամ իրավական համակարգին կատարված հղումը պետք է մեկնաբանվի որպես տվյալ պետության իրավունքի նյութական, այլ ոչ թե կոլիզիոն նորմերին կատարված հղում:

2. Կողմերի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը կիրառում է այն իրավունքը, որը որոշված է իր կողմից կիրառելի համարվող կոլիզիոն նորմերով: Այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալի կողմից ընտրված իրավունքն այլ է, քան արբիտրաժի վայրի իրավունքը, ապա արբիտրաժային տրիբունալը պարտավոր է պատճառաբանել այդ ընտրությունը:

3. Սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված կանոնից անկախ՝ կողմերի համաձայնության բացակայության դեպքում, եթե արբիտրաժի վայրը Հայաստանի Հանրապետությունն է, և արբիտրաժի կողմերը Հայաստանի Հանրապետության քաղաքացին է կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձը, ապա արբիտրաժային տրիբունալը վեճը լուծելիս կիրառում է Հայաստանի Հանրապետության իրավունքի նորմերը:

4. Բոլոր դեպքերում արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացնում պայմանագրի պայմանների համաձայն՝ հաշվի առնելով տվյալ գործարքի համար կիրառելի իրավունքը և առևտրային սովորույթները:

5. Արբիտրաժային տրիբունալը իրավունք ունի վեճը լուծելու արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա միայն այն դեպքում, եթե նա այդ մասին լիազորված է կողմերի կողմից հստակ արտահայտված ձևով:

29. Կողմերի ներկայացուցչությունը

1. Կողմերը կարող են իրենց գործերը վարել անմիջականորեն (անձամբ) կամ գործը վարելու համար պատշաճ ձևակերպված լիազորագիր ունեցող ներկայացուցիչների միջոցով:

30. Երրորդ անձանց մասնակցությունը

1. Երրորդ անձի ներգրավվումը արբիտրաժային վարույթին թույլատրվում է միայն արբիտրաժային վարույթի կողմերի համաձայնությամբ:

2. Երրորդ անձին վարույթ ներգրավվելու համար, բացի կողմերի համաձայնությունից, պահանջվում է նաև ներգրավվող կողմի համաձայնությունը:

3. Երրորդ անձին ներգրավելու համաձայնությունը պետք է լինի գրավոր:

4. Երրորդ անձին ներգրավվելու մասին դիմումը պետք է պարունակի.

1) հղում կոնկրետ արբիտրաժային վարույթին, որին ցանկանում է ներգրավվել տվյալ անձը.

2) երրորդ անձի լրիվ անվանումը, ներառյալ հասցեն և կոնտակտային տվյալները,

3) պատճառները, որոնց վրա հիմնվում է ներգրավվելու մասին դիմումը,

4) երրորդ անձի մասնակցության ձևը:

5. Արբիտրաժային վարույթին ներգրավվելու մասին երրորդ անձի դիմումի նկատմամբ, բացառությամբ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի, mutatis mutandis կիրառվում են Կանոնակարգի 11-րդ կետի՝ ներառյալ արբիտրաժային վճարի, վերաբերյալ պահանջները:

6. Արբիտրաժային վարույթին մասնակցելու վերաբերյալ երրորդ անձի համաձայնությունը համարվում է երրորդ անձի համաձայնություն՝ արբիտրաժային համաձայնության պայմաններին և Կանոնակարգի դրույթներին, ինչպես նաև երրորդ անձի համար արբիտրաժային համաձայնության պայմանների և Կանոնակարգի դրույթների պարտադիրություն:

7. Արբիտրաժային վարույթ ներգրավված երրորդ անձը վարույթն ընդունում է այնպես, ինչպես այն առկա էր մինչև նրա ներգրավվելու պահը, մասնավորապես նման անձն իրավունք չունի.

1) պահանջել կատարել կրկնակի դատավարական գործողություններ, որոնք կատարվել են մինչև տվյալ երրորդ անձի ներգրավվելը.

2) ներկայացնել առարկություններ արբիտրաժային տրիբունալի կազմի և ձևավորման վերաբերյալ.

3) արբիտրաժային տրիբունալի կազմին ներկայացնել բացարկներ այն հիմքերով, որպիսի հիմքերով այն ներկայացվել էր մինչև արբիտրաժային վարույթին երրորդ անձի ներգրավվումը.

4) պահանջել իրականացնել արբիտրաժային վարույթի կողմի այլ իրավունքներ և պարտականություններ, որոնց իրականացման համար Կանոնակարգով կամ արբիտրաժային տրիբունալի կողմից սահմանված ժամկետները լրացել են:

8. Արբիտրաժային տրիբունալը կողմի պատճառաբանված դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ, եթե արբիտրաժային վարույթի բնույթի հաշվառմամբ այն կհամարի անհրաժեշտ, կարող է հրաժարվել սույն կետի 7-րդ ենթակետով նախատեսված ցանկացած կանոնից:

31. Գործի ստացումը և նախապատրաստումը

1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կողմից գործը էլեկտրոնային եղանակով ստանալուց հետո երեք աշխատաքնային օրվա ընթացքում այն ձևական պահանջների պահպանման տեսանկյունից ստուգվում է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի աշխատակազմի կողմից, որից հետո մակագրվում է արբիտրին Կանոնակարգով նախատեսված կարգով:

2. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կողմից գործը թղթային եղանակով ստանալուց հետո հինգ աշխատաքնային օրվա ընթացքում ձևական պահանջների պահպանման տեսանկյունից ստուգվում է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի աշխատակազմի կողմից, որից հետո մուտքագրվում է էլեկտրոնային համակարգ և մակագրվում է արբիտրին Կանոնակարգով նախատեսված կարգով:

3. Արբիտրաժային տրիբունալի նախագահողը՝ ստանալով գործը և ընդունելով վարույթ, ստուգում է գործի քննության նախապատրաստական վիճակը, և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում է լրացուցիչ միջոցներ՝ գործի նախապատրաստման համար, մասնավորապես՝ կողմերից պահանջում է ներկայացնել գրավոր բացատրություններ, ապացույցներ և այլ լրացուցիչ փաստաթղթեր:

4. Արբիտրաժային տրիբունալը գործի նախապատրաստման համար լրացուցիչ միջոցներ ձեռնարկելիս նշանակում է ողջամիտ ժամկետներ, որոնց ընթացքում պետք է իրականացվեն այդ լրացուցիչ միջոցները:

5. Արբիտրաժային տրիբունալի նախագահողը կարող է դիմել ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան՝ գործի նախապատրաստման և վարույթի անցկացման հետ կապված որոշակի գործողությունների իրականացման խնդրանքով:

6. Արբիտրաժային տրիբունալը որոշում է, թե հայցադիմումին կամ հայցադիմումի պատասխանին կից կողմերը ինչ լրացուցիչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն՝ սահմանելով համապատասխան ժամկետներ նշված փաստաթղթերը ներկայացնելու համար:

32. Հայցի հիմքը և առարկան կամ հայցադիմումի պատասխանը լրացնելը

1. Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի առանց անհարկի ձգձգման փոխելու կամ լրացնելու հայցի հիմքը կամ առարկան կամ հայցադիմումի պատասխանը, ներառյալ հակընդդեմ հայցը, նվազեցնելու կամ ավելացնելու հայցապահանջների

չափը՝ մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործի քննությունն ավարտված հայտարարելը:

2. Հայցի հիմքն ու առարկան, հայցադիմումի պատասխանը, ներառյալ հակընդդեմ հայցը, չեն կարող փոխվել կամ լրացվել այնպես, որ դրանք դուրս գան արբիտրաժային համաձայնության շրջանակներից:

2. Հայցապահանջն ավելացնելու դեպքում հայցվորը պարտավոր է հայցային պահանջն ավելացնելու վերաբերյալ դիմումին կից ներկայացնել հայցապահանջի ավելացված մասին համապատասխանող արբիտրաժային վճարի վճարումը հավաստող փաստաթուղթ: Նշված փաստաթուղթը չներկայացնելու դեպքում դիմումը վերադարձվում է հայցվորին և հայցային պահանջը համարվում են չավելացված:

3. Արբիտրաժային տրիբունալը կողմերի կողմից գրավոր հայտարարություններ և այլ ապացույցներ ներկայացնելու համար կարող է սահմանել ժամկետներ՝ ներկայացված փաստաթղթերը և նյութերը մյուս կողմին ծանոթանալու նպատակով նախօրոք տրամադրելու համար:

33. Ապացույցները

1. Կողմերը պարտավոր են ապացուցել իրենց պահանջների կամ առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

2. Ցանկացած ժամանակ արբիտրաժային տրիբունալը կարող է կողմերից պահանջել արբիտրաժային տրիբունալի կողմից սահմանած ժամկետում ներկայացնել նաև փաստաթղթեր, իրեղեն կամ այլ ապացույցներ:

3. Արբիտրաժային տրիբունալն իրավասու է նաև իր հայեցողությամբ փորձաքննություն նշանակել և դիմել երրորդ անձանց՝ ապացույցներ ներկայացնելու համար, ինչպես նաև հրավիրել և լսել վկաների:

4. Կողմը կարող է ներկայացնել գրավոր ապացույցների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները: Գրավոր ապացույցներ են համարվում նաև էլեկտրոնային եղանակով կամ կապի այլ միջոցով ստացված տեղեկությունները:

5. Արբիտրաժային տրիբունալը կարող է պահանջել էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով ստացված նյութը ներկայացնել բնօրինակով կամ Կոնոնակարգի 16-րդ կետի 5-րդ և 25-րդ կետի 3-րդ ենթակետերով նախատեսված ձևով:

6. Կողմի՝ անհրաժեշտ ապացույցներ չտրամադրելը չի խոչընդոտում արբիտրաժային տրիբունալին շարունակել վարույթը և վճիռ կայացնել իր տրամադրության տակ եղած ապացույցների հիման վրա:

7. Ապացույցների ստուգումը (հետազոտումը) իրականացվում է արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված եղանակով:

8. Ներկայացված ապացույցների թույլատրելիությունը, վերաբերելիությունը, էականությունը և նշանակալիությունը գնահատում է արբիտրաժային տրիբունալը:

34. Գործի լսումները և փաստաթղթային վարույթը

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում գործի վարույթն իրականացնել կամ բանավոր լսումների կամ միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա:

Այնուամենայնիվ, արբիտրաժային տրիբունալը իրավունք ունի իրականացնել բանավոր լսումներ արբիտրաժային վարույթի համապատասխան փուլում՝ կողմերից որևէ մեկի միջնորդությամբ, եթե գտնում է, որ բանավոր լսումը անհրաժեշտ է գործի համակողմանի քննության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը պայմանավորվել են չիրականացնել բանավոր լսումներ:

2. Արբիտրաժային տրիբունալին կողմերից մեկի ներկայացրած բոլոր հայտարարությունները, փաստաթղթերը կամ այլ տեղեկատվությունը պետք է տրամադրվեն մյուս կողմին: Փորձագիտական եզրակացությունը կամ ապացուցողական նշանակություն ունեցող այլ փաստաթղթերը, որոնց վրա արբիտրաժային տրիբունալը կարող է հիմնվել վճիռ կայացնելիս, պետք է ուղարկվեն կողմերին:

3. Սույն կետի 2-րդ ենթակետում նշված հայտարարությունների, փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության, ինչպես նաև փորձագիտական եզրակացության կամ ապացուցողական նշանակություն ունեցող այլ փաստաթղթերի վերաբերյալ կողմերն իրենց դիրքորոշումը կարող են հայտնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

35. Արբիտրաժային տրիբունալի կողմից նշանակված փորձագետը

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը իր նախաձեռնությամբ կամ արբիտրաժային վարույթի կողմի միջնորդությամբ կարող է նշանակել մեկ կամ մի քանի փորձագետ՝ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու համար:

2. Որպես կանոն, մինչև նշանակվելը փորձագետը արբիտրաժային տրիբունալին է ներկայացնում իր որակավորման նկարագրությունը և հայտարարություն՝ իր անաչառության և անկախության վերաբերյալ, որոնք ուղարկվում են կողմերին: Արբիտրաժային տրիբունալի կողմից սահմանված ժամկետում կողմերը արբիտրաժային տրիբունալին հայտնում են փորձագետի մասնագիտական ունակությունների, անաչառության կամ անկախության վերաբերյալ իրենց ունեցած որևէ առարկության մասին: Արբիտրաժային տրիբունալը անհապաղ կայացնում է որոշում՝ ներկայացված առարկություններն ընդունելու անհրաժեշտության մասին: Կողմերը փորձագետի նշանակվելուց հետո նրա որակավորման, անաչառության կամ անկախության վերաբերյալ իրենց առարկությունները կարող են ներկայացնել միայն այն դեպքում, երբ առարկությունները պայմանավորված են եղել այնպիսի հանգամանքներով, որոնք կողմերին հայտնի են դարձել փորձագետի նշանակումից հետո: Արբիտրաժային տրիբունալը անհապաղ կայացնում է որոշում՝ համապատասխան միջոցներ կիրառելու մասին, եթե այդիպիսի միջոցներ կիրառելու անհրաժեշտությունն առկա է:

3. Կողմերը փորձագետին տրամադրում են գործին վերաբերող ցանկացած տեղեկություն կամ ուսումնասիրության համար ներկայացնում են գործին վերաբերող փաստաթղթեր, ապրանքներ և այլ գույք, որոնք փորձագետի կողմից կարող է պահանջվել կողմերից: Փորձագետի և կողմերի միջև ծագած ցանկացած վեճ, որն առաջացել է փորձագետի կողմից գործին վերաբերող փաստաթղթեր, ապրանքներ և

այլ գույք պահանջելու հիմնավորվածության վերաբերյալ, լուծվում է արբիտրաժային տրիբունալի կողմից:

4. Փորձագետի կողմից տրված եզրակացության օրինակներն ուղարկվում են կողմերին և նրանց տրվում է հնարավորություն՝ եզրակացության վերաբերյալ իրենց գրավոր դիրքորոշումները հայտնելու համար: Կողմերն իրավունք ունեն ծանաթանալ այն փաստաթղթերի հետ, որոնք դրվել են փորձագետի եզրակացության հիմքում:

5. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա կողմերից մեկի պահանջով, կամ եթե արբիտրաժային տրիբունալը դա անհրաժեշտ համարի, փորձագետը պարտավոր է իր գրավոր կամ բանավոր եզրակացությունը ներկայացնելուց հետո մասնակցել արբիտրաժի նիստին, որտեղ արբիտրաժային տրիբունալին և կողմերին տրվում է նրան հարցեր տալու հնարավորություն, ինչպես նաև կողմերը կարող են ներկայացնել փորձագետ-վկաներ՝ քննվող հարցերի շուրջ բացատրություններ տալու նպատակով:

6. Սույն կետով սահմանված կարգով նշանակված փորձագետի եզրակացությունը ենթակա է գնահատման արբիտրաժային տրիբունալի կողմից:

36. Բանավոր լսումները

1. Կողմերի՝ ներկայացված ապացույցների հիման վրա իրենց դիրքորոշումները հայտնելու և բանավոր վիճաբանությունների համար, արբիտրաժային տրիբունալի որոշմամբ կարող են իրականացվել բանավոր լսումներ: Բանավոր լսումներն իրականացվում են ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի գտնվելու վայրում՝ դռնփակ: Արբիտրաժային տրիբունալի թույլտվությամբ և կողմերի համաձայնությամբ բանավոր լսումներին կարող են ներկա գտնվել արբիտրաժային վարույթին չմասնակցող անձինք:

2. Բանավոր լսումների նիստերի անցկացման վայրի և ժամանակի մասին կողմերը տեղեկանում են ծանուցագրերով, որոնք կողմերին պետք է ուղարկվեն այնպիսի հաշվարկով, որպեսզի յուրաքանչյուր կողմ ծանուցագիրը ստանալուց հետո իր տնօրինության տակ ունենա ոչ պակաս հինգ աշխատանքային օր՝ բանավոր լսումներին պատրաստվելու և ներկայանալու համար:

3. Բանավոր լսումների ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված կողմի չներկայանալն արգելք չէ վարույթի իրականացման և գործով վճռի կայացման համար, բացառությամբ, երբ չներկայացած կողմը գրավոր ձևով ներկայացրել է միջնորդություն՝ հարգելի պատճառով բանավոր լսումները հետաձգելու համար:

4. Հետագա բանավոր քննության նիստերի անցկացման անհրաժեշտության դեպքում դրանց անցկացման ժամկետը նշանակվում է արբիտրաժային տրիբունալի կողմից՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, որի վերաբերյալ կողմերը ծանուցվում են տեղում՝ համապատասխան ստորագրությամբ, կամ Կանոնակարգով սահմանված կարգով:

5. Կողմը կարող է պատշաճ ձևակերպված գրավոր միջնորդություն ներկայացնել գործն իր բացակայությամբ՝ գործում առկա փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա քննելու վերաբերյալ:

37. Բանավոր լսումների արձանագրությունը

1. Գործի բանավոր լսումները վարվում են տեսաձայնագրման կամ պարզ թղթային արձանագրման միջոցով:

2. Տեսաձայնագրման սարքի առկայության դեպքում բանավոր լսումների արձանագրությունը վարվում է տեսաձայնագրման սարքի միջոցով:

3. Տեսաձայնագրման միջոցով բանավոր լսումները վարելու անհնարինության դեպքում արձանագրությունը վարվում է պարզ թղթային արձանագրման միջոցով, որը պետք է պարունակի.

1) ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի անվանումը.

2) գործի համարը.

3) լսումների վայրը և ամսաթիվը.

4) կողմերի անունները (անվանումները).

5) տեղեկություններ լսումներին կողմերի ներկայացուցիչների մասնակցության մասին.

6) արբիտրների, վկաների, փորձագետների, թարգմանիչների և լսումներին մասնակցող այլ անձանց անուններն ու ազգանունները.

7) լսումների ընթացքի կրճատ նկարագիրը.

8) կողմերի պահանջները և այլ կարևոր հայտարարությունների շարադրումը.

9) նշումներ լսումների հետաձգման կամ դրանց ավարտման հիմքերի վերաբերյալ.

10) արբիտրների ստորագրությունները:

4. Կողմերն իրավունք ունեն ծանոթանալ պարզ թղթային արձանագրության բովանդակությանը:

5. Կողմի միջնորդության հիման վրա արբիտրաժային տրիբունալի որոշմամբ պարզ թղթային արձանագրության մեջ կարող են մտցվել փոփոխություններ կամ լրացումներ, եթե կողմի միջնորդությունը համարվի հիմնավոր:

6. Տեսաձայնագրման սկավառակի օրինակը կամ պարզ թղթային արձանագրության պատճենը կողմի գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է վերջինիս՝ ոչ ուշ, քան նիստի հաջորդ աշխատանքային օրը:

38. Գործի վարույթը փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա

1. Կողմերը կարող են պայմանավորվել վեճը միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա քննելու վերաբերյալ՝ առանց բանավոր լսումների անցկացման:

2. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, գործի վարույթը կարող է իրականացվել միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա նաև արբիտրաժային տրիբունալի համապատասխան որոշմամբ:

3. Արբիտրաժային տրիբունալը կարող է իր հայեցողությամբ նշանակել նաև բանավոր լսումներ, եթե ներկայացված նյութերը բավարար չեն վեճն ըստ էության լուծելու համար:

39. Գործի քննության կասեցումը և հետաձգումը

1. Արբիտրաժային վարույթը կարող է կասեցվել կամ հետաձգվել:

2. Արբիտրաժային վարույթի կողմի դիմումի հիման վրա արբիտրաժային տրիբունալը կարող է հետաձգել արբիտրաժային գործի քննությունը, եթե նման հետաձգումը անհրաժեշտ է օրինական և արդար վճռի կայացման համար:

3. Արբիտրաժային տրիբունալը բոլոր դեպքերում հետաձգում է արբիտրաժային գործի քննությունը, եթե արբիտրաժային վարույթի կողմերը հայտարարում են գործի քննության հետաձգման անհրաժեշտության մասին՝ մինչև կողմերի մատնանշած դեպքերի կամ հանգամանքների վրա հասնելը:

4. Արբիտրաժային գործի քննությունը հետաձգվում է մինչև հետաձգման հիմք հանդիսացած դեպքերի կամ հանգամանքների վրա հասնելը կամ վերանալը:

5. Արբիտրաժային տրիբունալը, արբիտրաժային վարույթի կողմերի դիմումների հիման վրա կամ իր նախաձեռնությամբ, վերսկսում է գործի քննությունը, եթե վերացել են գործի հետաձգման հիմք հանդիսացող հանգամանքները:

6. Արբիտրաժային գործի քննության հետաձգման և վերսկսման մասին արբիտրաժային տրիբունալը կայացնում է որոշում՝ բացառությամբ բանավոր լսումներով վարույթ իրականացնելու դեպքերում:

Հետաձգված արբիտրաժային գործը հանձվում է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան:

7. Արբիտրաժային գործի քննության հետաձգման դեպքում Կանոնակարգով սահմանված ժամկետների հոսքը դադարում է և տվյալ ժամկետները սկսում են հոսել արբիտրաժային վարույթի վերսկսման պահից, եթե արբիտրաժային տրիբունալը գործի քննության հետաձգման դեպքերի կամ հանգամանքների հաշվառմամբ չի սահմանում այլ ժամկետներ:

40. Հայցի ապահովման միջոցները

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը կողմերից յուրաքանչյուրի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել հայցի ապահովման այնպիսի միջոցներ կիրառելու վերաբերյալ, որոնք նա կգտնի անհրաժեշտ՝ հաշվի առնելով վեճի առարկան:

2. Հայցի ապահովման միջոցը կիրառվում է այն դեպքում, եթե թե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել վճռի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին: Հայցի ապահովման միջոցը արբիտրաժային որոշման կամ այլ ցանկացած ձևով կայացվող ժամանակավոր միջոց է, որի միջոցով վեճը վերջնականապես լուծող դատական ակտի կայացմանը նախորդող ցանկացած ժամանակահատվածում արբիտրաժային տրիբունալը կողմից պահանջում է՝

1) հայցի քննության ընթացքում պահպանել կամ վերականգնել ստատուս-քվոն.

2) միջոցներ ձեռնարկել առկա կամ անխուսափելի վնասը կանխելու ուղղությամբ, կամ ձեռնպահ մնալ այնպիսի միջոցներից, որոնք կարող են հանգեցնել նման վնասի՝ այդ թվում արբիտրաժային գործընթացին.

3) տրամադրել միջոցներ ակտիվների պահպանման համար, որոնց հաշվին կարող է կատարվել կայացվելիք վճիռը, կամ

4) պահպանել ապացույցները, որոնք կարող են վերաբերել գործին և էական նշանակություն ունենալ վեճի լուծման համար.

5) արգելանք դնել պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով.

6) արգելել պատասխանողին որոշակի գործողություններ կատարելը.

7) պարտավորեցնել պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարելուց:

3. Կողմը, որը սույն կետով նախատեսված կարգով խնդրում է կիրառել հայցի ապահովման միջոցներ, արբիտրաժային տրիբունալին հիմնավորում է, որ.

1) հայցի ապահովման միջոց չկիրառելու դեպքում կդժվարացվի կամ անհնարին կդառնա վճռի կատարումը կամ կհասցվի այնպիսի վնաս, որը հնարավոր չէ համապատասխանաբար վերականգնել վնասները հատուցելու միջոցով և այդ վնասը զգալիորեն կգերազանցի այն վնասը, որը կհասցվի այն կողմին, որի նկատմամբ կիրառվելու է միջոցը, և

2) առկա է ողջամիտ հնարավորություն, որ հայցող կողմը հաջողության է հասնելու պահանջի էության հարցում: Նման հնարավորության մասին ցանկացած որոշում չի կաշկանդում արբիտրաժային տրիբունալի ազատությունը հետագայում այլ որոշում կայացնելու համար:

4. Սույն կետի 2-րդ ենթակետով նշված հայցի ապահովման միջոց կիրառելու խնդրանքի դեպքում, սույն կետի 3-րդ ենթակետի 1-ին և 2-րդ պարբերությունների պահանջները կիրառվում են միայն այն չափով, որ չափով որ արբիտրաժային տրիբունալը դա համարում է տեղին:

5. Արբիտրաժային տրիբունալը կարող է փոփոխել, կասեցնել կամ դադարեցնել իր սահմանած հայցի ապահովման միջոցը կամ նախնական կարգադրությունը՝ կողմերից մեկի դիմումի հիման վրա, կամ բացառիկ դեպքերում կողմերին նախապես ծանուցելուց հետո՝ իր նախաձեռնությամբ:

6. Արբիտրաժային տրիբունալը կարող է պահանջել կողմից, որը ներկայացրել է հայցի ապահովում կիրառելու միջնորդություն, տրամադրել պատշաճ երաշխիքներ, կապված նշված միջոցի հետ:

7. Արբիտրաժային տրիբունալը կարող է արբիտրաժային վարույթի ցանկացած կողմից պահանջել անհապաղ հայտնել այն հանգամանքների ցանկացած էական փոփոխության մասին, որոնց հիման վրա ներկայացվել է հայցի ապահովման միջոցը սահմանելու դիմում, կամ որոնց հիման վրա սահմանվել է հայցի ապահովման միջոցը:

8. Հայցի ապահովման միջոց սահմանելու դիմում կամ նախնական կարգադրություն տալու մասին միջնորդություն ներկայացնող կողմը պատասխանատվություն է կրում տվյալ հայցի ապահովման միջոցի կամ կարգադրության հետևանքով ցանկացած կողմի հասցված բոլոր ծախսերի և վնասների համար, եթե արբիտրաժային տրիբունալը հետագայում որոշում է, որ տվյալ հանգամանքներում հայցի ապահովման միջոցը կամ կարգադրությունը չպետք է սահմանվեր: Արբիտրաժային տրիբունալը վնասների հատուցման մասին հարցը կարող է լուծել վարույթի ցանկացած փուլում:

9. Իրավասու դատարան հայցի ապահովման միջոց կիրառելու խնդրանքով կողմի դիմելը չի կարող դիտվել անհամատեղելի արբիտրաժային համաձայնության հետ կամ նման համաձայնությամբ նախատեսված իրավունքներից հրաժարում:

ԲԱԺԻՆ VIII.
ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ

41. Արբիտրաժի վերջնական որոշումը

1. Արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային տրիբունալի կողմից վճռի կամ արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացմամբ:

2. Վճիռները և որոշումները շարադրվում են գրավոր ձևով, վերջնական են և պարտադիր են կողմերի համար կայացման պահից:

3. Մեկից ավելի արբիտրների կազմի դեպքում ցանկացած վճիռ կամ որոշում կայացվում է արբիտրաժային տրիբունալի արբիտրների մեծամասնությամբ:

4. Ընթացակարգային հարցերի վերաբերյալ մեծամասնության բացակայության կամ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը դա լիազորել է նախագահող արբիտրին, վերջինս կարող է որոշումներ ընդունել միանձնյա, այն հաշվառմամբ, որ նրա որոշումը կարող է վերանայվել արբիտրաժային տրիբունալի մյուս արբիտրների կողմից:

5. Բացառիկ դեպքերում արբիտրաժային տրիբունալը կարող է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդության հիման վրա ցանկացած ժամանակ մինչև վճռի կայացումը անցկացնել լրացուցիչ քննություն, եթե դա բխում է վեճի արդարացի լուծման շահերից:

6. Փաստաթղթային կամ բանավոր լսումներով վարույթ իրականացնելիս, արբիտրաժային տրիբունալի վճիռները և որոշումները արբիտրը ստորագրում է ձեռագիր կամ ֆաքսիմիլային եղանակով:

42. Արբիտրաժի վճռի կայացումը

1. Եթե գործի փաստաթղթային կամ այլ նյութերի հիման վրա կամ բանավոր լսումների միջոցով վարույթ իրականացնելու արդյունքում արբիտրաժային տրիբունալը գալիս է համոզման, որ վեճի հետ կապված բոլոր հանգամանքները բավարար չափով բացահայտված են, ապա հայտարարում է բանավոր լսումներն ավարտված և անցնում է վճռի կայացմանը:

2. Մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ վեճի քննության դեպքում արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացնում իր անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, իսկ միանձնյա արբիտրի կողմից գործի քննության դեպքում՝ միանձնյա:

3. Մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ արբիտրաժային վարույթի դեպքում բավական է արբիտրաժային տրիբունալի անդամների մեծամասնության ստորագրությունների առկայությունը այն պայմանով, որ վճռում նշվեն բացակայող ստորագրությունների պատճառները: Արբիտրաժային վճռի կամ դրա որևէ

պատճառաբանությանը չհամաձայնվելու դեպքում յուրաքանչյուր արբիտր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

4. Վճիռը կայացվում է Կանոնակարգի 26-րդ կետով սահմանված ժամկետում և առաքվում է կողմերին, իսկ վճռի մեկ օրինակը կցվում է արբիտրաժային գործին:

43. Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը

1. Վճիռը պետք է կայացվի գրավոր: Վճռում մասնավորապես նշվում են.

1) ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի անվանումը.

2) գործի համարը.

3) արբիտրաժի անցկացման վայրը և վճռի կայացման ամսաթիվը.

4) արբիտրների անունները և ազգանունները.

5) կողմերի և արբիտրաժի վարույթին մասնակցող այլ անձանց անուն ազգանունները (անվանումները).

6) վեճի առարկան և գործի հանգամանքների կրճատ նկարագրությունը.

7) շարժառիթները, որոնց վրա հիմնված է վճիռը, բացառությամբ, երբ կողմերը համաձայնվել են, որ այդպիսիք չպետք է նշվեն վճռում կամ, եթե կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ.

8) համառոտ եզրահանգումներ հայցային պահանջների բավարարման կամ մերժման մասին.

9) գործով արբիտրաժային վճարների և ծախսերի բաշխումը կողմերի միջև.

10) արբիտրների ստորագրությունները:

44. Առանձին արբիտրաժային որոշում

1. Արբիտրաժային տրիբունալը ցանկացած հարցի վերաբերյալ ցանկացած ժամանակ կարող է կայացնել առանձին արբիտրաժային որոշում:

2. Առանձին արբիտրաժային որոշումների նկատմամբ կիրառելի են Կանոնակարգի 42-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի և 43-րդ կետի պահանջները:

45. Համաձայնեցված պայմաններով վճիռ

1. Եթե արբիտրաժային վարույթի ընթացքում կողմերը հաշտությամբ լուծում են վեճը, ապա արբիտրաժային վարույթն ավարտվում է: Կողմերի խնդրանքի հիման վրա արբիտրաժային տրիբունալը վճռով հաստատում է կողմերի կնքած հաշտության համաձայնությունը: Արբիտրաժային տրիբունալը պարտավոր չէ պատճառաբանել համաձայնեցված պայմաններով վճիռը:

2. Կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու դեպքում, արբիտրաժային տրիբունալի վճիռը պետք է պարունակի հաշտության համաձայնության բառացի շարադրանքը:

3. Կողմերի կնքած հաշտության համաձայնության վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի վճիռը պետք է համապատասխանի Կանոնակարգի 43-րդ կետի պահանջներին:

46. Վճռի, որոշումների առաքումը

1. Կայացված վճիռը, արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշումը և այլ որոշումները ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կողմից առաքվում են կողմերին:

47. Վճռի ուղղումը, պարզաբանումը և լրացումը

1. Ցանկացած կողմ, տեղեկացնելով մյուս կողմին, կարող է արբիտրաժի վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին՝ խնդրելով ուղղել վճռում առկա տեղ գտած թվաբանական սխալները, վրիպակները կամ գրասխալները կամ նմանաբնույթ այլ սխալները.

Արբիտրաժային տրիբունալը կողմի դիմումը հիմնավոր գտնելու դեպքում այն ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում կատարում է համապատասխան ուղղումներ կամ տալիս պարզաբանումներ, որոնք դառնում են վճռի բաղկացուցիչ մաս:

Արբիտրաժային տրիբունալի վճռում ուղղումներ կարող են կատարվել նաև արբիտրաժային տրիբունալի կողմից սեփական նախաձեռնությամբ մինչև վճռի կատարումը՝ վճռի կայացման օրվանից երեսունօրյա ժամկետում:

2. Կողմերից յուրաքանչյուրը, տեղեկացնելով մյուս կողմին, արբիտրաժի վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում կարող է դիմել արբիտրաժային տրիբունալին՝ վճռի որևէ կոնկրետ կետ կամ մաս պարզաբանելու համար:

Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր է համարում այդպիսի դիմումը, ապա դրա ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում տալիս է անհրաժեշտ պարզաբանումներ: Այդ պարզաբանումը դառնում է վճռի բաղկացուցիչ մասը:

3. Կողմերից յուրաքանչյուրը, մյուս կողմին տեղյակ պահելով, կարող է արբիտրաժի վճիռը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին կայացնելու լրացուցիչ վճիռ այն պահանջների վերաբերյալ, որոնք պատշաճ կերպով ներկայացվել են արբիտրաժային վարույթում, սակայն վճռում չեն արտացոլվել:

Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր համարի այդ դիմումը, ապա պարտավոր է այն ստանալուց հետո վաթսունօրյա ժամկետում կայացնել լրացուցիչ վճիռ:

4. Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային տրիբունալը կարող է երկարաձգել սույն կետում նշված ժամկետները:

5. Վճռի ուղղումը և պարզաբանումը, ինչպես նաև լրացուցիչ վճիռը հանդիսանում են արբիտրաժային վճռի բաղկացուցիչ մաս և դրանց նկատմամբ կիրառվում են Կանոնակարգի 42-րդ կետի դրույթները:

48. Արբիտրաժի ավարտն առանց վճռի կայացման

1. Գործով վճիռ չկայացնելու դեպքում արբիտրաժային վարույթն ավարտվում է արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշման կայացմամբ:

2. Արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշումը կայացվում է.

1) հայցվորի կողմից հայցից հրաժարվելու դեպքում, բացառությամբ եթե պատասխանողն այդ մասին ծանուցում ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում առարկում է գործի վարույթի ավարտման դեմ և ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը, իսկ այն դեպքում, երբ արբիտրաժային տրիբունալը ձևավորված է՝ արբիտրաժային տրիբունալը ճանաչում է պատասխանողի օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում.

2) կողմերի միջև արբիտրաժային վարույթի դադարեցման վերաբերյալ պայմանավորվածության դեպքում.

3) ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանը, իսկ արբիտրաժային տրիբունալը ձևավորված լինելու դեպքում արբիտրաժային տրիբունալը, գտնում է, որ վարույթի շարունակումը ինչ-ինչ պատճառներով դարձել է ավելորդ կամ անհնարին, մասնավորապես, երբ բացակայում են գործի քննության և վեճն ըստ էության լուծելու համար անհրաժեշտ նախադրյալները:

3. Արբիտրաժային վարույթի դադարեցման դեպքերում արբիտրաժային ծախսերի վճարումները և դրանց հետ վերադարձը կատարվում են Կանոնակարգի Հավելվածով սահմանված կարգով:

4. Արբիտրաժային վարույթն ավարտելու մասին որոշումը կայացնում է ՀԲՄ Ֆինանսական արբիտրաժային դատարանը, իսկ արբիտրաժային տրիբունալ ձևավորված լինելու դեպքում՝ արբիտրաժային տրիբունալը:

49. Արբիտրաժի վճիռների, որոշումների պահպանումը

1. Արբիտրաժի վճիռները կամ արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշումները արբիտրաժային գործին վերաբերող բոլոր փաստաթղթերով հանձնվում են ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան՝ պահպանության համար:

2. Արբիտրաժի վճիռները, արբիտրաժի ավարտի վերաբերյալ որոշումները և գործի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը պահպանվում են արբիտրաժն ավարտվելուց հետո հինգ տարի:

ԲԱԺԻՆ IX.
ՎՃՌԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

50. Արբիտրաժային տրիբունալի վճռի կատարումը

1. Արբիտրաժային տրիբունալի վճիռները կողմերը կատարում են կամովին՝ վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է կատարման անհապաղ:

2. Արբիտրաժային տրիբունալի վճռում նշված ժամկետում կամ վճռի անհապաղ կատարման դեպքում կամովին չկատարված վճիռները ի կատար են ածվում հարկադիր կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան:

3. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար էլեկտրոնային հաղորդագրությունը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկվում է, եթե՝

1) արբիտրաժի կողմը Հայաստանի Հանրապետության քաղաքացին է կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձը, և

2) արբիտրաժի վճռով բռնագանձման ենթակա գումարի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը:

51. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար դիմում ներկայացնելը

1. Կանոնակարգի 50-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում արբիտրաժային տրիբունալի վճիռը ենթակա է հարկադիր կատարման այն անձի դիմումի հիման վրա, որի օգտին կայացվել է արբիտրաժի վճիռը:

2. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար դիմումը կարող է ներկայացվել վճիռը ստանալու պահից մեկ տարվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան վճիռը ստանալու պահից երեք ամիս հետո:

52. Դիմումին ներկայացվող պահանջները

1. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար ներկայացվող դիմումի մեջ նշվում են՝

1) ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի անվանումը և արբիտրաժային տրիբունալի կազմը.

2) արբիտրաժային վարույթի մասնակիցների անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը), նրանց հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, դիմող ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները, դիմող իրավաբանական անձի պետական գրանցման համարը.

3) արբիտրաժի վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և արբիտրաժային գործի համարը.

4) արբիտրաժի վճռի հարկադիր կատարման մասին պահանջը:

2. Արբիտրաժի վճռի հարկադիր կատարման դիմումին կից ներկայացվում են՝

1) արբիտրաժային տրիբունալի վճիռը.

2) արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար ներկայացված դիմումի պատճենն արբիտրաժային վարույթի մյուս կողմ(եր)ին հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթը.

3) տեղեկատվություն՝ առաջին ատյանի դատարանի վարույթում արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի բացակայության մասին:

3. Սույն կետով սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված դիմումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած անձին:

53. Դիմումի քննությունը

1. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար ներկայացված դիմումը քննվում է դիմումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ ներկայացված փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա:

2. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար ներկայացված դիմումը թողնվում է առանց քննության, եթե դիմումը քննելիս պարզվում է, որ.

1) վճիռը կողմերի համար դեռևս պարտադիր չի դարձել, կամ

2) առաջին ատյանի դատարանի վարույթում առկա է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում:

3. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման դիմումն առանց քննության թողնելը խոչընդոտ չէ ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան կրկին դիմելու համար, եթե արբիտրաժին դիմելու հնարավորությունը սպառված չէ:

4. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացնում է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը(իք):

54. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելը

1. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման դիմումը բավարարելու դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկվում է էլեկտրոնային հաղորդագրություն, որում նշվում են՝

1) ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի անվանումը, վայրը և արբիտրաժային տրիբունալի կազմը.

2) արբիտրաժային վարույթի կողմերի անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը), նրանց բնակության (գտնվելու) վայրը.

3) արբիտրաժային տրիբունալի վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

4) վարույթի մասնակիցների անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) և գործում առկա այլ հասցեները, էլեկտրոնային փոստի հասցեն՝ դրա առկայության դեպքում, քաղաքացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը՝ դրա առկայության դեպքում, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման համարը, բացառությամբ, եթե գործի քննության ընթացքում հնարավոր չի եղել ստանալ այդ տվյալները.

5) արբիտրաժային տրիբունալի վճռի կատարման ենթակա մասը.

6) արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար դիմումը ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը:

2. Էլեկտրոնային հաղորդագրության հետ միասին Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկում է նաև արբիտրաժային տրիբունալի վճռի սկանավորված պատճենը:

ԲԱԺԻՆ X.
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

55. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը

1. Նոր խմբագրությամբ կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2025թ. Հուլիսի 1-ից:

2. Մինչև նոր խմբագրությամբ կանոնակարգի ուժի մեջ մտնելը հարուցված գործերը քննվում են Կանոնակարգին համապատասխան, եթե կողմերը կամ կողմերից որևէ մեկը չի պահանջել վեճը քննել իրենց միջև կնքված արբիտրաժային համաձայնության ժամանակ գործող կանոնակարգով սահմանված ընթացակարգով:

3. Կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնության ժամանակ գործող կանոնակարգով սահմանված ընթացակարգով վարույթ իրականացնելու համար կողմերը կամ կողմերից որևէ մեկը կարող են դիմել արբիտրաժի մասին ծանուցումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Սույն կետի 3-րդ ենթակետում նշված ժամկետում կողմերի կամ կողմերից որևէ մեկի կողմից համապատասխան դիմում չստացվելու դեպքում արբիտրաժային տրիբունալը վարույթն իրականացնում է Կանոնակարգով սահմանված կարգով՝ Կանոնակարգի 2-րդ կետի պահանջների հաշվառմամբ:

Հավելված

ԿԱՐԳ
ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ

1. Արբիտրաժային վճար

1. ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի կողմից վարույթ ընդունված յուրաքանչյուր գործով գանձվում է արբիտրաժային վճար: Արբիտրաժային վճարը գանձվում է գործի քննության համար:

2. Արբիտրաժային վճարի հաշվարկման կարգը

1. Գույքային պահանջներով արբիտրաժային վճարը գանձվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ հայցագնի 1,3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 12.000 (տասներկու հազար) դրամից և ոչ ավել՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամից: Մեկից ավելի իրար հետ չփոխկապակցված պահանջներով հայցի դեպքում (նույն կողմեր, սակայն տարբեր պայմանագրեր) արբիտրաժային վճարը գանձվում է սույն կետով նախատեսված չափով յուրաքանչյուր պահանջի համար առանձին:

2. Ոչ գույքային պահանջներով արբիտրաժային վճարը գանձվում է 50.000 (հիսուն հազար) դրամի չափով:

3. Կողմերի ծանուցման էլեկտրոնային փոստի հասցեից բացի սովորական փոստային կապով ծանուցման համար (անկախ մեկ գործով ծանուցվող անձանց քանակից) հայցվորը հայցը ներկայացնելիս վճարում է լրացուցիչ արբիտրաժային վճար՝ 2,500 ՀՀ դրամի չափով:

4. Գործի նյութերի՝ հայցադիմումին կից փաստաթղթերի և այլ անհրաժեշտ ապացույցների պատճենահանման համար, սահմանվում է վճար՝ յուրաքանչյուր էջը 50 (հիսուն) դրամ, իսկ բանավոր լսումների լազերային կրիչի կրկնօրինակի համար՝ 200 դրամ:

5. Արբիտրաժին աջակցող և վերահսկող դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչվելու դեպքում տվյալ գործով կրկին ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարան դիմելու դեպքում արբիտրաժային վճար վճարվում է միայն ավելացված հայցագնի մասով:

6. Արբիտրաժային վճարների փոխանցման հետ կապված բանկային միջնորդավճարները վճարվում են վճարումը կատարող կողմի հաշվին:

7. Հայցային պահանջներն ավելացնելու դեպքում հայցվորը պարտավոր է հայցային պահանջներն ավելացնելու վերաբերյալ դիմումին կցել հայցապահանջների ավելացված մասին համապատասխանող արբիտրաժային վճարի վճարման անդորրագիրը:

3. Արբիտրաժային վճարի մասնակի վերադարձ

1. Եթե մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործը վարույթ ընդունելը հայցվորը հրաժարվում է հայցից կամ կողմերը պայմանավորվում են արբիտրաժային

վարույթի դադարեցման վերաբերյալ, ապա արբիտրաժային վճարի գումարի 50 տոկոսը վերադարձվում է:

2. Եթե արբիտրաժային վարույթն ավարտվում է արբիտրաժային տրիբունալի ձևավորումից հետո՝ առանց վճռի կայացման, ապա արբիտրաժային վճարի գումարը հետ չի վերադարձվում:

3. Մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործը վարույթ ընդունելը հայցային պահանջների չափը նվազեցնելու դեպքում վճարված արբիտրաժային վճարի՝ հայցային պահանջների նվազեցված մասին համապատասխանող մասը վերադարձվում է:

4. Արբիտրաժային վճարի վերադարձման մասին պետք է ամրագրվի արբիտրաժային վճռի կամ արբիտրաժային վարույթն ավարտելու մասին որոշման մեջ:

5. Հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները՝ ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահը կամ արբիտրաժային տրիբունալը կարող է որոշում կայացնել արբիտրաժային վճարի վերադարձման կամ սույն կարգում նախատեսված վերադարձման ենթակա գումարների չափերը փոփոխելու մասին:

6. Եթե կողմերն այլ բան չեն պայմանավորվել, ապա արբիտրաժային ծախսերը կողմերի միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

7. Արբիտրաժային վճարի կամ գործի քննության հետ կապված ծախսերի կատարման կապակցությամբ առաջացած ցանկացած վեճ լուծում է ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահը կամ արբիտրաժային տրիբունալը՝ վերջինիս ձևավորված լինելու դեպքում:

5. Գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսեր

1. Գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերն այն ծախսերն են, որոնք կապված են գործերի քննության կազմակերպման հետ: Գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերի մասին նշվում է գործով վճռի կամ որոշման մեջ:

Գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերը ներառում են.

1) արբիտրների կողմից կատարված տրանսպորտային և այլ խելամիտ ծախսերը,

2) փորձագետների, թարգմանիչների ծառայությունների, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալի կողմից հայցվող այլ օժանդակության համար խելամիտ ծախսերը,

3) վկաների կողմից կատարված տրանսպորտային և այլ խելամիտ ծախսերն այն չափով, որքանով այդ ծախսերը համաձայնեցված են արբիտրաժային տրիբունալի կողմից,

4) արբիտրաժով պայմանավորված կողմերի կատարած իրավաբանական և այլ ծախսերն այն չափով, որքանով այդ ծախսերը արբիտրաժային տրիբունալը կհամարի խելամիտ,

5) կողմի դիմումի հիման վրա կատարված լրացուցիչ ծախսերը կապված մյուս կողմին լրացուցիչ ծանուցելու հետ, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացված փոստային առաքանիների համար կատարված ծախսերը,

պատճենահանման, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալի կողմից թույլատրված այլ խելամիտ ծախսերը:

2. Գործի քննության հետ կապված լրացուցիչ ծախսերը կատարվում են այն կողմի հաշվին, որի միջնորդությամբ կատարվել են այդ ծախսերը:

3. Արբիտրաժի վճիռն ուղղելու, պարզաբանելու և լրացնելու համար արբիտրաժային տրիբունալը կարող է որոշմամբ գանձել սույն կետի 1-5-րդ ենթակետերում նշված ծախսերը, սակայն չի կարող սահմանել որևէ այլ լրացուցիչ հոնորարներ: